# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 827 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 887-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2024 թվականի հոկտեմբերի 2-ի «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 887-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման հավելվածի՝

ա. 4-րդ կետի «Իրավական ակտերի նախագծերը ներկայացնելու ժամկետները» սյունակում «2025 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ» բառերը փոխարինել «2026 թվականի մարտի 1-ին տասնօրյակ» բառերով, իսկ «Իրավական ակտերի նախագծերի ընդունման ժամկետները» սյունակում «2026 թվականի մարտի 1-ին տասնօրյակ» բառերը փոխարինել «2026 թվականի ապրիլի 3-րդ տասնօրյակ» բառերով,

բ. 7-րդ կետի «Օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով ընդունման ենթակա իրավական ակտերի տեսակն ու վերնագրերը» սյունակում «Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների կառուցման, վերակառուցման և

(կամ) շահագործման թույլտվություն տալու կարգը և փաստաթղթերի ցանկը հաստատելու մասին» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» բառերով, «Իրավական ակտերի նախագծերը ներկայացնելու ժամկետները» այնուակում «2025 թվականի հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ» բառերը փոխարինել «2025 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ» բառերով, իսկ «Իրավական ակտերի նախագծերի ընդունման ժամկետները» այնուակում «2025 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ» բառերը փոխարինել «2026 թվականի հունվարի 3-րդ տասնօրյակ» բառերով,

գ. 12-րդ կետի «Իրավական ակտերի նախագծերը ներկայացնելու ժամկետները» այնուակում «2025 թվականի սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ» բառերը փոխարինել «2026 թվականի մարտի 2-րդ տասնօրյակ» բառերով, իսկ «Իրավական ակտերի նախագծերի ընդունման ժամկետները» այնուակում «2025 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ» բառերը փոխարինել «2026 թվականի հունիսի 1-ին տասնօրյակ» բառերով,

դ. 15-րդ կետի «Իրավական ակտերի նախագծերը ներկայացնելու ժամկետները» այնուակում «2025 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ» բառերը փոխարինել «2026 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ» բառերով, իսկ «Իրավական ակտերի նախագծերի ընդունման ժամկետները» այնուակում «2026 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ» բառերը փոխարինել «2026 թվականի հունիսի 2-րդ տասնօրյակ» բառերով,

ե. 4-րդ, 5-րդ, 6-րդ, 12-րդ, 13-րդ, 15-րդ և 16-րդ կետերի «Իրավական ակտերի ընդունման առնչությամբ իրականացվող միջոցառման ֆինանսական ապահովման աղբյուրը» այնուակում «Ֆինանսավորում չի պահանջվում:» բառերը փոխարինել «Օրենքով չարգելված այլ միջոցներ» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

17.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ